

Յողամարգ

Վարչական ղեկավար՝ Բարսեղյան Գնել

Հեռ 077-31-75-55
055-31-75-55

Մակերես՝ 18.2կմ²

Բնակչություն՝ 555

tsoghamarg.shirak@mta.gov.am

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցք քաղաքից 9կմ հարավ, մարզկենտրոնից գտնվում է 24կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ճզըխլար, Ճզղլար, Չըզըխլար, Չիզիխլար, Յոխամարգ, Յոխամարք անվանումները: Յողամարգ է վերանվանվել 1946 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Տեղադրված է Աշոցք-Գյումրի ավտոմայրուղու վրա: Գյուղը գտնվում է ալիքավոր բարձրադիր հարթավայրում՝ ծովի մակարդակից 1950մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ:

Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղը զգալի տուժել է 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից, որի արդյունքում ավերվել են գյուղի տների մոտ կեսը:

Գյուղում և նրա շրջակայքում հայտնաբերվել են կիկլոպյան ամրոցի մնացորդներ(մ.թ.ա. I հազարամյակ): Ունի միջնադարի կանգուն եկեղեցի:

Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի, Մեքսստիայի շրջաններից 1829-1830թթ: 1831 թ-ին գյուղն ունեցել է 174, 1897 թ-ին՝ 877, 1926 թ-ին՝ 515, 1939 թ-ին՝ 807, 1959 թ-ին՝ 591, 1979 թ-ին՝ 477, 1989 թ-ին՝ 600 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 555 մարդ: Մեռային կազմում տղամարդիկ և կանայք ունեն նույն համամասնությունը՝ կազմելով 50-ական տոկոս: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 28%, աշխատունակներ՝ 51%, հետաշխատունակներ՝ 21%:

Ունի 119 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, մշակույթի տուն, կապի հանգույց: Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (560հա), խոտհարքերը (43հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 63 և 926 հեկտար: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են խոշոր եղջերավոր ամասնաբուծությամբ՝ կաթնամսատու ուղղությամբ, թռչնաբուծությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Յողամարգ
Ինդեքս՝ 2810